ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 160- Ա **29 փետրվարի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 15-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N97-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N202-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1)<<Բարսեղյան Գագիկ/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

2)<<Պետրոսյան Ռիտա/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

3)<<Դանիելյան Հարություն/Տիմ ներկայացուցիչ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

4) <<Զիրոյան Անդրանիկ/ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Բուդոյան Ցողիկ Ռուբենի/ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ